ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 11.10.2000

Հոդված 1. Օրենքի նպատակը

Սույն օրենքը սահմանում է Աղետի գոտու վերականգնման պետական քաղաքականության մշակման հիմնական սկզբունքները, այդ քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները եւ կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Աղետի գոտու հասկացությունը

Սույն օրենքի իմաստով Աղետի գոտի են համարվում Հայաստանի Հանրապետության այն տարածքները, որոնցում տեղաբաշխված բնակելի, արտադրական, սոցիալական, պատմամշակութային, կոմունալ եւ այլ նշանակության օբյեկտներն ու ենթակառուցվածքները տուժել են 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետեւանքով:

Հոդված 3. Աղետի գոտու վերականգնման մասին իրավական ակտերը

Աղետի գոտու վերականգնման գործընթացը եւ դրա հետ կապված հարաբերությունները կանոնակարգվում են սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով:

Հոդված 4. Աղետի գոտու վերականգնման պետական քաղաքականության ծրագրային հիմունքները

1. Աղետի գոտու վերականգնողական աշխատանքներն իրականացվում են Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրով (այսուհետ՝ Համալիր ծրագիր) սահմանված ժամկետներում եւ կարգով:

2. Համալիր ծրագիրը կառավարության ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովը՝ համապատասխան օրենքի ընդունմամբ:

3. Համալիր ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման տարեկան համամասնությունները սահմանվում են կառավարության կողմից եւ արտացոլվում Աղետի գոտու վերականգնման տարեկան ծրագրերում (այսուհետ՝ Տարեկան ծրագիր):

Տարեկան ծրագիրը մշակվում է կառավարության կողմից:

4. Տարեկան ծրագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսավորման գումարն առանձին տողով արտացոլվում է համապատասխան տարվա պետական բյուջեի ծախսերում՝ որպես պաշտպանված հոդված:

Հոդված 5. Համալիր եւ Տարեկան ծրագրերի բովանդակությունը եւ դրանց մշակման սկզբունքները

1. Համալիր եւ Տարեկան ծրագրերը ներառում են՝

ա) հիմնական խնդիրները.

բ) նախատեսված վերականգնողական աշխատանքների ծավալները եւ իրականացման ժամանակացույցը՝ ըստ մարզերի եւ բնակավայրերի.

գ) Աղետի գոտու բնակավայրերի կառուցապատման հատակագծային փաստաթղթերի համալրում եւ ճշգրտում՝ թաղամասերի համալիր սպասարկման ենթակառուցվածքների եւ բարեկարգման միջոցառումների ներառմամբ.

դ) վերականգնողական աշխատանքների ծավալները՝ ըստ վերականգնման ենթակա օբյեկտների նշանակության.

ե) վերականգնողական աշխատանքների ֆինանսավորման սկզբունքները.

զ) վերականգնողական աշխատանքների ֆինանսավորման ծավալները՝ ըստ դրանց ստացման աղբյուրների.